1 MAR 2010

ԽՍՀՄ ՊԵՏԱՊ

# ԿԱՆՈՆՆԵՐ

## ԿՐԱԿԻՑ ՅԵՎ ԱՅԼ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԿԱՄԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

368
Խ-11

ՅԵՐԵՎԱՆ—1935

11 SEP 2013

«Հաստատում եմ»
ԽՍՀՄ ֆինանսների ժողովրդական կոմիսար՝ Գ. ԳՐԻՆԿՈ
5 օգոստոսի 1934 թ.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

§ 1. Այս կանոններով կամավոր կերպով ապահովագրվում է բանվորների, ծառայողների, կոլտնտեսականների, մենատնտեսների և այլ աշխատավորների, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների գույքը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Անհատական կարգով գյուղհարկ վճարող կուլակային տնտեսությունների, № 3 ցուցակով յեկամտահարկ վճարողների, ինչպես նաև իրենց նախկին սոցիալական դրությամբ կամ զբաղմունքներով ընտրական իրավունքներից զրկվածների գույքը չի ապահովագրվում։

§ 2. Ապահովագրվում են ամեն տեսակի տնային գույք, կահավորում, հագուստեղեն, սպիտակեղեն, յերաժշտական գործիքներ, գրքեր, նկարներ, տնային պիտույքների առարկաներ, ամեն տեսակի տնտեսական մթերքներ և այլն, նաև գյուղատնտեսական և արտադրական ինվենտար—աշխատավոր մենատնտեսություններում, ինչպես նաև բժիշկների, ճարտարագետների ու գիտական աշխատողների ատամնաբուժական, բժշկական, ֆիզիքական և այլ կաբինետների կահավորումը, սարքավորում ու գործիքներ։ Ապահովագրվում են ամեն տեսակի փոխադրական միջոցներ՝ ավտո-մեքենաներ, մոտոցիկլետներ, հեծանիվներ, կառքեր, սայլեր, սահնակներ և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ապահովագրել կարելի յե նաև տնային թռչուններ, գյուղատնտեսական անասուններ, վորոնք չունեն պարտադիր կոպարային ապահովագրությամբ նախատեսված հասակը կամ բոլորովին չեն ապահովագրվում այդ կարգով։

Իսկ այն վայրերում, վորտեղ պարտադիր կոպարային ապահովագրություն չի մտցված, այս կանոններով կարելի յե ամեն տեսակի գյուղատնտեսական անասուններ ապահովագրել։



§ 3. Կարելի յե ապահովագրել ամբողջ գույքը կամ գույքատիրոջ ցանկությամբ միայն առանձին առարկաներ (ջութակ, դաշնամուր, փոխադրական միջոցներ, ատամնաբուժական կամ բժշկական կաբինետների կահավորում, սարքավորում և այլն)։

Այն դեպքերում, յերբ ապահովագրությունն կնքելիս նշված չի լինում թե § 2-ում թված գույքերից վորն է ապահովագրվում, ապահովագրված համարվում է տվյալ անձի կամ տնտեսության այն ամբողջ գույքը, վորը գտնվում է ապահովագրական փաստաթղթում մատնանշված շենքերում։

Ամեն տեսակի փաստաթղթեր, ակտեր, դրամանիշներ, արժեթղթեր, ինչպես նաև վոսկի, արծաթե և այլ թանգարժեք մետաղներից պատրաստված իրեր ապահովագրության չեն ընդունվում։

§ 4. Գույքն ապահովագրել կարող է ինչպես գույքատերերը, նույնպես և լոմբարդներ, կոմիսիոն խանութները, տրանսպորտային կազմակերպությունները, պետական և կոոպերատիվ խանութները, վորոնք կահույք և այլ առարկաներ են ապառիկ վաճառում և ամեն տեսակի այլ հիմնարկություններ և կազմակերպություններ, վորոնք գույքատիրոջ հանդեպ իրենց վրա յեն վերցրել ապահովագրվող գույքի ապահովագրության պատասխանատվությունը կամ այդ գույքի վերաբերմամբ նյութական կամ դրամական շահ ունեն։

§ 5. Այն դեպքում, յերբ գույք ապահովագրողը գույքատերը չի, այլ § 4-ում նշված հիմնարկություններից կամ կազմակերպություններից մեկն է և յեթե ապահովագրությունը կնքված է ավելի մեծ գումարով քան շահագրգռված են ապահովագրող հիմնարկություններն ու կազմակերպությունները, բայց վոչ ավելի քան գույքի իսկական արժեքի չափով (տես § 8), ապա վնաս առաջ գալու դեպքում ապահովագրական գումարի և ապահովագրողի շահագրգռության միջև յեղած տարբերությունը վճարվում է գույքատիրոջը։

## ԻՆՉՊԻՍԻ ԱՂԵՏՆԵՐԻՑ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ ԳՈՒՅՔԸ

§ 6. Այս կանոնների § 2-ում թված տնային և այլ գույքի ապահովագրության գծով Պետապը պատաս-

խանատվություն կրում է այն վնասների համար, վորոնք առաջ են յեկել ապահովագրված գույքը փչանալուց կամ վնասվելուց՝ ա) կրակի չանթահարման, պայթումի, յեթե նույնիսկ չանթահարումը կամ պայթումը հրդեհ առաջ չի բերել, հեղեղումի, յերկրաշարժի, փոթորկի տարափի և մրրկի պատճառով:

բ) գողության կամ ապահովագրված գույքը հրդեհի կամ այլ տարերային աղետի կամ այն փրկելու ժամանակ կորչելու պատճառով: Գույքի գողությունից կամ կորչելուց առաջ յեկած վնասները հատուցվում են այն դեպքերում միայն, յեթե գույքի գողության կամ կորչելու մասին հայտնված է յեղել միլիցիային:

գ) ապահովագրված գույքը փրկելու, ինչպես նաև հրդեհը հանգցնելու կամ ընդհանրապես հրդեհի տարածումը կանխելու (ջրով վնասելը, կոտրելը և այլն) համար ձեռք առնված միջոցների պատճառով:

§ 7. Պետապը կարող է հրաժարվել ապահովագրության ընդունելու ամեն տեսակի այնպիսի գույքեր, վորոնք, շնորհիվ անկանոն պահպանության, հրդեհային տեսակետից առանձնապես վտանգավոր դրության մեջ են գտնվում, յեթե ապահովագրողը չի կամենալ անհրաժեշտ հակահրդեհային միջոցներ ձեռք առնել:

## ԻՆՉ ԳՈՒՄԱՐՈՎ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԼ ԳՈՒՅՔԸ, ԻՆՉՊԻՍԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՅԵՎ ԻՆՉ ԿԱՐԳՈՎ Ե ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԱՅՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

§ 8. Այն գումարը, վորով գույքատերը կամ § 4-ում հիշատակված հիմնարկությունները կամենում են ապահովագրել գույքը, ապահովագրողը վորոշում է գույքի իսկական արժեքի սահմաններում գնման գներով, բայց վոչ ավելի բարձր քան պետական և կոոպերատիվ խանութների առևտրական գները, իսկ գյուղատնտեսական մթերքների վերաբերմամբ՝ վոչ ավելի բարձր քան կոլտնտեսային շուկաների գները: Գույքը գնահատելիս պետք է հաշվի առնել գույքի (կամ առանձին առարկաների) սկզբնական արժեքի նվազումը՝ գործածելուց և մաշվելուց:



§ 9. Այս կանոնների § 2-ում թված տնային և այլ գույքը (բացի գյուղատնտեսական մթերքներից) ապահովագրվում է մեկ տարով: Գյուղատնտեսական մթերքները կարելի յե ապահովագրել մեկ տարուց ավելի կարճ ժամանակով: Ապահովագրության սկիզբը և վերջ համարվում է այն որացույցային թվերի 24 ժամը, (գիշերվա ժամի 12), վորոնք նշված կլինեն ապահովագրական անդորրագրում:

§ 10. Գույքի ապահովագրություն կատարվում է՝ քաղաքներում—մեկ ընտանիքին պատկանող գույքը մինչև 6000 ռ. գումարով, իսկ առանձին անհատին (միայնակ) պատկանող գույքը մինչև 3000 ռ., գյուղական վայրերում մեկ ընտանիքին պատկանող գույքը մինչև 3000 ռ. գումարով, իսկ առանձին անհատին (միայնակ) պատկանող գույքը մինչև 2000 ռ. գումարով և այդպիսին կնքվում է պարզեցված ձևով, գույքատիրոջ բանավոր հայտարարության հիման վրա:

Նշված լիմիտներից ավելի բարձր գումարով ապահովագրել կարելի յե գրավոր հայտարարության հիման վրա, վորի մեջ ապահովագրվողը Պետապի կողմից սահմանված բլանկում պարտավոր է ճիշտ տեղեկություն տալ բոլոր դրված հարցերին:

Յեթե հրդեհից կամ այլ տարերային աղետից հետո կհայտնաբերվի, վոր ապահովագրվողը գույքի ապահովագրության վերաբերյալ սխալ տեղեկություններ է հաղորդել կամ ապահովագրվող գույքի արժեքը նա չափազանցրել է, ապա Պետապը կարող է իջեցնել ապահովագրական վարձատրության չափը այրված կամ վնասված գույքի իսկական արժեքի համեմատ (§ 8):

§ 11. Ապահովագրություն կարելի յե կնքել անհատական և կոլեկտիվ կարգով: Կոլեկտիվ ապահովագրության վերաբերմամբ թույլատրվում է զեղչ անել 20%-ի չափով և ապահովագրական վճարումները կատարել մաս-մաս մի քանի նվագով: Կոլեկտիվ ապահովագրության կնքման պայմաններն ու կարգը սահմանվում է Պետապի հրահանգով:

Կոլեկտիվ ապահովագրության պայմանագրերը կնքվում են պարզեցված ձևով առանց գույքի ստուգման,

կորեկտիվին մասնակցողի ցանկացած գումարով ու նրա գույքի արժեքի համեմատ, բայց ոչ ավելի բարձր քան այս կանոնների § 10-ում հիշատակված լիմիտները։

§ 12. Ապահովագրական պայմանագիր կնքելու հանգամանքը վավերացվում է ապահովագրական անդորրագիր տալով։

Անդորրագիրը ստանալուց հետո ապահովագրվողը մուծում է ապահովագրական վճարումները լրիվ կամ պայմանավորված մասը, յեթե թույլատրվում է մի քանի նվագներով վճարումներ կատարելը։ Մինչև ապահովագրական վճարումները լրիվ կամ առաջին նվագի մուծում կատարելն ապահովագրությունն ուժի մեջ չի մտնում։

Հետագա նվագների մուծումներն ուշացնելու դեպքում, ապահովագրությունն մեքենայորեն դադարում է և Պետապն ազատվում է ապահովագրական վարձատրություն վճարելու պարտականությունից։

## ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՏԻՐՈՋ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 13. Պետապն իրավունք ունի ապահովագրության ժամկետի ընթացքում իր ներկայացուցիչների միջոցով ստուգել ապահովագրված գույքի գնահատումն ու դրությունը։

Յեթե ստուգման ժամանակ կպարզվի, որ գույքը ակնհայտ անտնտեսավար դրության մեջ է և ապահովագրվողի կողմից հրդեհային պաշտպանության կանոնները չկատարելու պատճառով վտանգի յե յենթարկված, ապա Պետապը կարող է դադարեցնել ապահովագրությունը։ Իսկ յեթե ստուգման ժամանակ կպարզվի, որ ապահովագրական գումարն ապահովագրված գույքի իսկական արժեքից ավելի բարձր է, ապա Պետապը կարող է դադարեցնել ապահովագրությունը կամ առաջարկել ապահովագրվողին վերակնքել ապահովագրությունը գույքի իսկական արժեքի գումարով։

§ 14. Յեթե ապահովագրված գույքը և ապահովագրական փաստաթղթերում հիշատակված շենքից փոխադրվում է մի այլ տեղ, ապա ապահովագրվողը պարտավոր է 7 որվա ընթացքում այս մասին գրավոր հայտնել Պետապի այն որգանին, վորը կնքել է ապահովագրությունը։

Այս պահանջն ապահովագրվողի կողմից չկատարելու դեպքում Պետապը կարող է ապահովագրական վարձատրությունը չվճարել։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ապահովագրվողը ազատվում է ապահովագրված գույքի ժամանակավոր տեղափոխության մասին Պետապին հայտնելու պարտականությունից, յեթե փոխադրվող գույքի արժեքը նրա ապահովագրական գումարի 20%-ից ավելի չէ։

## ՀՐԴԵՀԻ ԿԱՄ ԱՅԼ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼԸ, ԳՈՒՅՔ ՓՐԿԵԼՆ ՈՒ ՎՆԱՍՆԵՐ ՎՈՐՈՇԵԼԸ

§ 15. Ապահովագրված գույքի հրդեհման կամ այլ տարերային աղետի յենթարկվելու մասին ապահովագրվողը կամ նրան փոխարինողը պարտավոր է անմիջապես, բայց ոչ ուշ քան հրդեհի կամ տարերային աղետի պահից յերեք որվա ընթացքում, գրավոր հայտարարություն ներկայացնել կամ ուղարկել գույքի վայրում գտնվող ապահովագրական որգանին։ Այն ապահովագրվողին, վորը հնարավորություն ունեցել է, բայց չի հայտնել աղետի մասին այս պրակում նշված ժամկետում, Պետապն իրավունք ունի մերժել կրած վնասը հատուցելը։

§ 16. Հրդեհի կամ այլ տարերային աղետի ժամանակ ապահովագրվողը կամ նրան փոխարինողը պարտավոր են բոլոր միջոցները ձեռք առնել ապահովագրական գույքը փրկելու, նրա հետագա վնասումը կանխելու, վորպեսզի չավելանան վնասները, ինչպես նաև հոգալ, վորպեսզի փրկվեն և պահպանվեն ինչպես արդեն փրկված առարկաները, նույնպես և այրված կամ վնասված իրերի մնացորդները, ընդվորում ապահովագրվողը պարտավոր է պահել այդպիսիններն (յեթե այն չի պատճում հետագա վնասմամբ) այնպես, ինչպես դրանք վնասված են հրդեհի կամ այլ տարերային աղետի

պատճառով, մինչև Պետապի ներկայացուցչի գալը վնասը լուծարքի յենթարկելու համար:

Յեթե ապահովագրվողը այդ միջոցները ձեռք չի առնում, ապա Պետապը վնասներն ավելացնելու համար պատասխանատվություն չի կրում:

§ 17. Ապահովագրվողը հրդեհի կամ այլ տարերային աղետի վերաբերյալ հայտարարության հետ միաժամանակ (§ 15) պարտավոր է Պետապին ներկայացնել ցուցակ, վորի մեջ պետք է մանրամասն հիշատակված լինի թե ինչպիսի գույք է այրվել, փչացել թե վնասվել է այն, ցույց տալով հրդեհի որն առկա առանձին իրերի արժեքը և վնասների ընդհանուր գումարը:

Ցուցակում ցույց է տրվում նաև թե վորքան են վնասվել առանձին առարկաներ և դրանց արժեքը հրդեհից կամ այլ տարերային աղետից հետո:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գյուղական վայրերում կոլտնտեսականներին և մենատնտես գյուղացիներին իրավունք է տրվում ցուցակ ներկայացնելու փոխարեն վնասները լուծարքի յենթարկելու ժամանակ բանավոր հայտնել Պետապի ներկայացուցչին այն տվյալները, վորոնք պիտի մտցվեն ցուցակի մեջ:

Չվնասված առարկաների արժեքը ցուցակի մեջ չպետք է մտցնել:

§ 18. Հրդեհից կամ այլ տարերային աղետից հետո մնացած թեկուզ և վնասված առարկաները, ապահովագրվողի օգտին թողնվում են ըստ գնահատման, կողմերի համաձայնությամբ, իսկ յեթե համաձայնություն չի կայանում, ապա այդ առարկաները գնահատվում են եքսպերտիզայի միջոցով:

## ՎՈՐ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏԱՊԸ ՉԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՆԱՍՆԵՐԸ

§ 19. Պետապը վնասներ չի հատուցանում այն բոլոր դեպքերում, յերբ ապահովագրված գույքի վնասումը կամ փչացումը տեղի յե ունեցել ապահովագրվողի մեղքով, այսինքն նրա կողմից հակահրդեհային կանոնները չկատարելու հետևանքով, վոր չափով այդ պարտավորությունը նրա վրա յե դրված, ինչպես նաև ա-



պահովագրվողի դիտավորյալ գործողությունների կամ կոպիտ անզգուշության պատճառով:

Բացի §§ 14 և 15-ում նշված դեպքերից Պետապը նաև վնասներ չի հատուցում.—

ա) յեթե հաստատվում է, վոր ապահովագրվողը, ապահովագրական վարձատրությունն ավելացնելու նպատակով, հրդեհի ժամանակ կամ դրանից հետո, անձամբ կամ ուրիշների միջոցով, վնասել է ապահովագրված գույքը, յեթե դիտավորյալ կերպով թաքցրել է փրկված ապահովագրված առարկաները կամ ցույց է տվել այնպիսի գույքի վնասում, վորը հրդեհի վայրում չի յեղել յեթե ներկայացրել է անհայտնի կեղծ հաշիվներ կամ այլ ապացույցներ:

§ 20. Պետապի օրգանները պարտավոր են վնասների լուծարքման և ակտեր կազմելու գործին անցնել հրդեհի դեպքի մասին հայտարարություն ստանալուն պես, բայց վոչ ուշ քան 3 օրվա ընթացքում քաղաքներում և 7 օրվա ընթացքում մնացած վայրերում:

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՎՃԱՐԵԼԸ ՅԵՎ ՎՆԱՍՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԿՏԵՐ ԿԱԶՄԵԼՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

§ 21. Վնասների վերաբերյալ ակտերն ու լուծարքային փաստաթղթերը Պետապի համապատասխան օրգանները (շրջանային, քաղաքային կամ մարզային) պիտի կազմեն և հաստատեն վնասների չափը վերջնականապես վորոշելու պահից 15 օրվա ընթացքում:

§ 22. Ապահովագրական վարձատրություն ապահովագրվողին պետք է վճարել վնասների հաստատման պահից 5 օրվա ընթացքում (§ 21):

§ 23. Ապահովագրական վարձատրություն ստանալիս ապահովագրվողը (§ 4) պետք է ներկայացնի ապահովագրական անդորրագիր, ապահովագրական անդորրագիրը կորցնելու դեպքում, վարձատրություն տրվում է անդորրագրի կրկնակի հիման վրա:

§ 24. Այն դեպքերում—յերբ ապահովագրական վարձատրությունը կազմում է հրդեհված կամ այլ տա-

բերային աղետի յենթարկված գույքի ապահովագրական գումարի 75%-ը կամ ավելին, ապահովագրությունը դադարեցվում է 24 ժամից սկսած, ապահովագրական օրգանների հետ համաձայնություն գալու համար կամ ապահովագրությունը դադարեցնելու մասին Պետապին հայտնելու պահից: Յեթե ապահովագրական վարձատրությունը 75%-ից ավելի քիչ է, ապա ապահովագրությունը մնում է իր ուժի մեջ այնքան ժամանակով, վորքան ժամանակով ապահովագրություն է կնքված և ապահովագրական գումարն իջեցվում է վճարված ապահովագրական վարձատրության գումարով:

## ԲՈՂՈՔՆԵՐ

§ 26. Շրջանային ապահովագրական տեսուչների սխալ գործողությունների դեմ բողոքներ տրվում են Պետապի յերկրային կամ մարզային վարչություններին, իսկ վորտեղ այդպիսիք չկան, Պետապի հանրապետական վարչություններին: Պետապի յերկրային, մարզային վարչությունների, ինչպես նաև Պետապի ինքնավար հանրապետություններում ունեցած վարչությունների դեմ բողոքներ տրվում են Պետապի դաշնակից հանրապետություններում ունեցած վարչություններին, իսկ վերջինների գործողությունների դեմ ԽՍՀՄ Պետապի գլխավոր վարչությանը Մոսկվայում:

ԽՍՀՄ Պետապի Գլխ. վարչ. պետ՝ ԱՐԱԼՈՎ

8/V 34 թ.



«Հաստատում եմ»
ԽՍՀՄ ֆինանսների ժողովրդական կոմիսար՝ Գ. ԳՐԻՆԿՈ
5 օգոստոսի 1934 թ.

# ՏԱՐԻՖԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ ՅԵՎ ՀՐԱՀԱՆԳ

## ՏՆԱՅԻՆ ԳՈՒՅՔԸ ԿՐԱԿԻՑ ՅԵՎ ԱՅԼ ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ԿԱՄԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I.

## ՏԱՐԻՖՆԵՐ

§ 1. Տնային գույքը, գյուղատնտեսական ինվենտարը, փոխադրական միջոցները, գյուղատնտեսական մթերքները և այլ գույք ապահովագրելու համար ապահովագրական վճարումներ գանձվում են հետևյալ դրույքներով (ռուբլիներով ապահովագրական գումարի յուրաքանչյուր 1000 ռ. տարեկան)՝

ա) Մոսկվա, Լենինգրադ, Գորկի, Սարատով, Ստալինգրադ, Ռոստով-Դոն, Սամարա, Սվերդլովսկ, Կալինին, Տուլա, Յարոսլավ, Վորոնեժ, Խարկով, Կիյեվ, Օդեսսա, Դնեպրոպետրովսկ, Ստալին, Մինսկ, Թիֆլիս, Բագու, Յերևան, Տաշքենդ, Սամարկանդ, Աշխաբադ և Ստալինաբադ քաղաքներում.

| | |
|---|---|
| Հրադիմացկուն տանիք ունեցող քարե շենքերում | — 1 ռ. 50 կ. |
| » » » խառը » | — 2 ռ. 50 կ. |
| մնացած շենքերում | — 4 ռ. |

բ) մնացած քաղաքներում և հատկապես բանվորների համար կառուցված և վարչական իմաստով վորպես ինքնուրույն միավորներ առանձնացված բանվորական ավաններում.

| | |
|---|---|
| Հրադիմացկուն տանիք ունեցող քարե շենքերում . . | 2 ռ. 50 կ. |
| » » » խառը » | 3 ռ. |
| մնացած շենքերում . . . . . . . . . | 4 ռ. 50 կ. |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — ԽՍՀՄ հերոսների, ԽՍՀՄ շքանշաններով կամ պատվավոր հեղափոխական զենքով պար-

գևատրվածների, աշխատանքի հերոսների, ինչպես նաև սոցիալական ապահովագրության մեջ գտնվողների, կարմիր բանակայինների, նախկին կարմիր գվարդիականների և կարմիր պարտիզաների, կամավոր հրշեջ խմբի անդամների գույքն ապահովագրելիս «ա» և «բ» կետերում նշված դրույքներից զեղչվում է 20% :

գ) գյուղական և ամառանոցային վայրերում վերոհիշյալ գույքի ապահովագրական վճարումներ պետք է գանձվեն այն դրույքներով, վորոնք սահմանված են տվյալ վայրի համար շենքերի կոպարային ապահովագրությամբ, նայած թե ումն է պատկանում գույքը, այսինքն, յեթե ապահովագրվում է կոլտնտեսականի գույքը, ապա կոլտնտեսականների շենքերն ապահովագրելու համար սահմանված դրույքներով, իսկ յեթե ապահովագրվում է մենատնտեսների գույքը, ապա մենատնտեսների շենքերն ապահովագրելու համար սահմանված դրույքներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1000 ռ. ավելի ցածր գումարով ապահովագրելիս ապահովագրական վճարումները պետք է վորոշել ապահովագրական գումարի համեմատ, ընդվորում վոչ լրիվ հարյուրակները համարվում են լրիվ հարյուրակներ: 2. Գյուղական վայրերում այն տնային գույքի վերաբերմամբ, վորը պատկանում է.

ա) § 1-ին ծանոթության մեջ թված անձանց.

բ) գյուղատնտեսության հետ կապ չունեցող և գյուղհարկ չվճարող բանվորներին և ծառայողներին, կիրառվում են մնացած քաղաքներում տնային գույք ապահովագրելու համար սահմանված դրույքները (§ 1-ին «բ» կետը):

§ 2. Բանվորական ավաններում, սլաբոտկաներում և այլն, վարչական տեսակետից քաղաքի շարքին դասված մերձքաղաքային բնակավայրերում, կիրառվում են այն դրույքները, վորոնք սահմանված են նույն քաղաքում տնային գույք ապահովագրելու համար (§ 1-ի «ա» և «բ» կետերը):

§ 3. Քաղաքից դուրս գտնվող շենքերի և յերկաթուղային տրանսպորտին հատկացված հողերի վրա յեղած շենքերի վերաբերմամբ, յեթե այդ հողերը յեր-



կաթուղու գծին հարակից են, կիրառվում են մնացած քաղաքների համար սահմանված դրույքները (§ 1 «բ» կետ):

§ 4. Ցորենի, կտավհատի, կանեփի, և այլ տնտեսական մթերքների ապահովագրության համար, յեթե նրանք չորացվում են հատուկ շենքերում ապահովագրական վճարումներ գանձվում են ապահովագրական գումարի յուրաքանչյուր 100 ռուբլուց 3 ռուբլի ապահովագրության ամբողջ սեզոնի համար:

Այս տարիֆի § 1-ում մատնանշված դրույքներով ապահովագրվում է ապահովագրության կանոնների § 2-ում թված գույքը:

Նույն դրույքներով ապահովագրվում է նաև այն գույքը (կահույք, մահճակալներ և այլն), վոր պետական և կոոպերատիվ խանութները վաճառում են աշխատավորներին արժեքը մաս-մաս վճարելու պայմանով:

§ 5. Տնային այնպիսի իրեր և տնային պիտույքների առարկաներ (նույն թվում հեծանիվներ, կարի մեքենաներ և այլն) ապահովագրելու վերաբերմամբ, վորոնք տրվում են վերանորոգելու, կարելու, ձևափոխելու, լվանալու և այլն, կիրառվում են տարիֆի § 1-ում հիշատակված դրույքները 50 % հավելումով:

§ 6. Լոմբարդներում գրավ դրված, ինչպես նաև պետական կամ կոոպերատիվ խանութները վարձատրությամբ վաճառելու պայմանով (կոմիսիա) հանձնված գույքի ապահովագրելուն վերաբերմամբ կիրառվում են տնային գույքի համար սահմանված դրույքները (տարիֆի § 1) առանց հավելման:

§ 7. § 1-ում հիշատակված դրույքներով գյուղական վայրերում կարող են ապահովագրել նաև շինափայտը, ( с р у б ), վոր պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա չէ:

§ 8. Շենքերն ըստ իրենց նյութի, պատերի և տանիքների բաժանվում են հետևյալ կերպ՝

ա) տարիֆի համաձայն քարե շենքեր համարվում են այնպիսիները, վորոնք ունեն քարի, աղյուսի, բետոնի, յերկաթբետոնի կամ յերկաթի պատեր, ինչպես

նաև այն շենքերը, վորոնց պատերի դրսի կողմը շարված ե այրած աղյուսով, իսկ ներքին կողմը՝ չայրված աղյուսով:

բ) տարիֆի համաձայն փայտի շենքեր համարվում են այնպիսիները, վորոնց պատերն ունեն փայտի մասեր, բացառությամբ «դ» կետում նշված շենքերից:

գ) խառը համարվում են մնացած այն բոլոր շենքերը, վորոնք քարե և փայտե չեն, ինչպես նաև այն շենքերը, վորոնց պատերի վոչ պակաս՝ քան կեսն իրենց քառակուսային բովանդակությամբ քարե յեն կամ վորոնց պատերը շարված են աղյուսով, ինչպես նաև այրված աղյուսից և փայտից կառուցված ֆախվերկյան շենքերը, վորոնք յերկու կողմից յերկաթապատ են.

դ) հրադիմացկուն տանիքներով շենքեր համարվում են այնպիսիները, վորոնք ծածկված են չայրվող նյութերով, որինակ՝ մետաղով, կղմինդրով, բետոնով, շիֆերով, խեռնիտով, ապակով մետաղի շրջանակների մեջ, ծածկի տոլով, հողով, կավ-ծղոտով, ինչպես նաև կավի հետ խառնած յեղեգնով կամ քուլաչով, յեթե մինչև տանիքը ծածկելն այդ տանիքների բաղադրիչ մասերը պահվում են կավի լուծույթի մեջ՝ կցվում այդ լուծույթով, իսկ տանիքի վրա ամրացնելուց հետո ծածկվում են կավի շերտով:

ե) այն շենքերը, վորոնք ծածկված են այրվող նյութերով, որինակ, փայտով, քրծինով, ծղոտով, յեղեգով, կամ կնձնիով, ինչպես նաև կավ-ծղոտով, յեթե «դ» կետում նշված մշակման չեն յենթարկվում, համարվում են վոչ հրադիմացկուն շենքեր:

զ) զանազան նյութերով ծածկված շենքերը, ծածկված համարվում են այն նյութով, վոր ամենից շատ վտանգավոր ե:

## 2.

## ՀՐԱՀԱՆԳ

§ 1. Տնային գույքի ապահովագրությունը կրակից և այլ տարերային աղետներից անց ե կացվում ԽՍՀՄ



Ֆինժողկոմատի կողմից 1934 թ. օգոստոսի 5-ին հաստատված կանոնների հիման վրա:

§ 2. Տնային գույք ապահովագրելու կարգը ցույց ե տրված 1934 թ. օգոստոսի 5-ին հաստատված կրակից և այլ տարերային աղետներից կամավոր կերպով ապահովագրվելու կանոնների § 10-ում:

§ 3. Ապահովագրությունը վերանորոգվում ե նույն կարգով, ինչ կարգով նորն ե կնքվում, ընդվորում. այն դեպքերում, յերբ սկզբնական ապահովագրությունը կնքվում ե հայտարարությամբ (ապահ. կանոն. § 10), ապահովագրությունը վերանորոգվում ե առանց փոփոխության և նոր հայտարարություն չի պահանջվում:

Պարզեցված կարգով (առանց ստուգման) ապահովագրություն ընդունվում ե վոչ ավելի քան հետևյալ բարձրագույն գումարներով (լիմիտներով):

| | Մեկ ընտանիքի գույքն ապահով. համար | Առանձին անհատների (միայնակ) գույքն ապահով. համար |
|---|---|---|
| Քաղաքներում | Մինչ 6000 ռ. | Մինչև 3000 ռ. |
| Գյուղ. վայրերում | » 3000 ռ. | » 2000 ռ. |

§ 4. Ապահովագրություն կարելի յե կնքել անհատական և կոլեկտիվ կարգով: Հարյուր հոգուց վոչ պակաս բանվորներ և ծառայողներ ունեցող հիմնարկություններում, ֆաբրիկաներում և գործարաններում կոլեկտիվ ապահովագրություն կնքելիս, իսկ խորհտնտեսություններում, ՄՏԿ և կոլտնտեսություններում անկախ բանվորների և ծառայողների, իսկ կոլտնտեսություններում անկախ անդամների թվից զեղչ ե արվում, յեթե ապահովագրությամբ ընդգրկված ե վոչ պակաս քան տվյալ կոլեկտիվի աշխատակիցների ընդհանուր թվի 50%—ապա 10%, իսկ յեթե ընդգրկված ե վոչ պակաս քան 70%-ը, ապա զեղչ արվում ե 20%-ի չափով:

Բնակվարձկոոպներում և բնակկոոպներում կոլեկտիվ կերպով տնային գույք ապահովագրելիս 20%-ի չափով զեղչ գրվում ե, յեթե գույքն ապահովա-

գրելու ցանկություն է հայտնում վոչ պակաս քան տվյալ բնակվարձկոոպի կամ բանբնակկոոպի փայտի շենքերում բնակվող ընտանիքների (ներառյալ ինքնուրույն ապրողներին և միայնակներին) $75\,^{0}/_{0}$ և քարի շենքերում բնակվող ընտանիքների $50\,^{0}/_{0}$: Ընդվորում, յեթե բնակվարձկոոպներում կամ բանբնակկոոպներում կան զանազան տեսակի շենքեր, ապա ապահովագըրվողների տոկոսը սահմանվում է ըստ գերակշռող շենքերի, ըստ թե մեկի և թե մյուսի մեջ յեղած բնակարանների:

§ 5. Ըստ կոլեկտիվ ապահովագրությունների ապահովագրական վճարումներ կարելի յե կատարել մաս մաս, յերեք ամսվա ընթացքում, հավասար մասերով, ընդվորում ապահովագրություն կնքելիս անպայման պետք է մուծել հասանելիք ապահովագրական վճարումների մեկ յերրորդ մասը:

Հերթական վճարում չկատարելու դեպքում անճշտակատար վճարողների գույքի ապահովագրությունը կամավոր ապահովագրության կանոնների § 12-ի հիման վրա դադարեցվում է և այդ մասին յուրաքանչյուր ապահովագրական անդորրագրի վրա պետք է նշվի և ցույց տրվի հերթական վճարումների չափն ու ժամկետները:

§ 6. Կոլեկտիվ ապահովագրություն կնքվում է կոլեկտիվի յուրաքանչյուր մասնակցողի ուզած գումարով, նրա գույքի արժեքի համեմատ, բայց վոչ ավելի քան այս հրահանգի § 3-ում հիշատակված լիմիտի չափով:

Սահմանված լիմիտից ավելի բարձր ապահովագրել կամենալու դեպքում ապահովագրությունն ապահովագրվողի հայտարարությամբ կամավոր ապահովագրության կանոնների § 10-ի հիման վրա կարելի յե անհատական կարգով կնքել (կամավոր ապահով. § 10):

§ 7. Կոլեկտիվ ապահովագրություն կնքվում է տվյալ հիմարկության, ձեռնարկության կամ կազմակերպության ֆաբզավտեղկոմների, օժանդակող հանձնաժողովների, փոխադարձ օգնության դրամարկղների, բնակվարձկոոպների կամ բանբնակկոոպների վարչությունների, ինչպես նաև կոլեկտիվի կողմից ապահովագրություն կնքելու լիազորված անձանց կազմած ցուցակներով, կամ այլ կարգով, վորը կսահմանեն Պետապի և այն հիմնարկության վարչության ներկայացուցիչները, վորոնց բանվորների ու ծառայողների գույքն է ապահովագրվում:

Ցուցակում պետք է նշված լինի՝ 1) ապահովագրվողի ազգանունը, անունն ու հայրանունը. 2) ապահովագրվող գույքի վայրը (ճիշտ հասցեն), 3) ինչպիսի շենքերում է գտնվում գույքը (պատերի և տանիքների նյութը), 4) ինչպիսի գումարով է ապահովագրություն կնքվում, 5) հասանելիք ապահովագրական վճարումների գումարը, (վորոնք վորոշվում են յուրաքանչյուրից առանձին նայած ապահովագրական գումարին և այն շենքի կառուցվածքին, վորտեղ գույքն է գտնվում), 6) ապահովական հերթական վճարումը, յեթե թույլատըրված է ապահովագրական գումարը մաս-մաս վճարել, 7) յուրաքանչյուր ապահովագրվողի ստորագրությունը:

§ 8. Նախկին պարագրաֆում հիշատակված ցուցակի հիման վրա Պետապի օրգանն յուրաքանչյուր ապահովագրողին տալիս է ապահովագրական անդորրագիր (կամավոր ապահով. կանոնների § 12-ը): Ապահովագրությունը նման ցուցակով, իր ուժի մեջ է մտնում բոլոր հասանելիք ապահովագրական վճարումները գանձելու պահից, (այն ապահովագրությունների գծով վորոնց վերաբերմամբ թույլատրված կլինի ապահովագրական գումարը մաս-մաս վճարել, պետք է մուծել առաջին նվազի վճարումը): Ապահովագրական վճարումը պետք է մուծել Պետբանկ կամ խնայողական դրամարկղը Պետապի ընթացիկ հաշվին: Դրամ ընդունելու վերաբերյալ տրված անդորրագիրը վորպես ապահովագրության կնքելու ապացույց է ծառայում և այդ պահից սկսվում է Պետապի պատասխանատվությունը մինչև սահմանված ապահովագրական անդորրագրեր տալը:

Ապահովագրվողների ցուցակը (§ 7) կազմվում է յերկու օրինակից, վորոնց մեկը մնում է այն հիմնարկության մեջ, [illegible] գույքն ապահովագըր–

3976
33322

վում է (Փաբգործտեղկոմների, կոլեկտիվի կողմից ապահովագրություն կնքելու լիազորված անձի կամ հիմնարկության վարչության միջոցով), իսկ յերկրորդ օրինակը՝ (բնագիրը) դրամ մուծելու վերաբերյալ անդորրագրի հետ միասին ուղարկվում է Պետապի որգանին ապահովագրությունը վերջնականապես ձևակերպելու համար:

§ 9. Կոլեկտիվ ապահովագրության հերթական վճարումները ստանալու վերաբերյալ տրվում են հատուկ անդորրագրեր: Առանձին դեպքերում թույլատրրվում է տալ ապահովագրվողների ամբողջ կոլեկտիվին մեկ՝ ընդհանուր անդորրագիր, նշելով յուրաքանչյուրի անդորրագրում, թե յերբ է ստացված հերթական վճարումը:

§ 10. Տնային գույքի, ինվենտարի, փոխադրական միջոցների և այլի ապահովագրությունը կնքվում է մեկ տարով:

Ապահովագրությունը գյուղատնտեսական մթերքների այն մասի վերաբերմամբ, վորը մնացել է մենատնտես գյուղացիական տնտեսություններում պետական պարտավորությունները կատարելուց հետո, ինչպես նաև կոլտնտեսականների այն գյուղատնտեսական մթերքների ապահովագրությունը, վորը նրանց տրամադրության տակ է թողնվել, կարելի յե կնքել մեկ տարուց ավելի կարճ ժամանակով: Այս դեպքում ապահովագրական վճարումները պետք է գանձել հետևյալ չափերով՝

| | |
|---|---|
| Մինչև 3 ամիս ներառյալ ժամկետ տալու դեպքում տարեկան վարձատրության | 40% |
| » 3-ից մինչև 6 ամիս | 60% |
| 6-ից մինչև 9 ամիս | 80% |
| » 9-ից մինչև 12 | 100% |

§ 11. Գյուղերից դուրս գտնվող տնային գույքն ու գյուղատնտեսական մթերքներն ապահովագրության չեն ընդունվում: Չի ապահովագրվում նաև անմարդաբնակ տներում գտնվող գույքը:

§ 12. Հատուկ շենքերում չորացվելիք հացն ու գյուղատնտեսական մթերքներն ապահովագրության ընդունվում են այն ժամանակաշրջանում միայն, յերբ տվյալ վայրում սովորաբար գյուղատնտեսական մթերք-



Гос. Публ. Библ.

ներ են չորացնում այն շենքերում, ընդ վորում նույն ժամանակաշրջանի համար ժամկետներ տրվում են:

§ 13. Տնային գույքն ու գյուղատնտեսական մթերքները պարզեցված կարգով և սահմանված լիմիտից ավելի ցածր գումարով ապահովագրելու դեպքում թույլատրվում է գույքը նույն կարգով լրացուցիչ ապահովագրել մինչ լիմիտի գումարը:

Այս դեպքերում ապահովագրական վճարումները կարելի յե վորոշել մինչ ապահովագրություն կնքելու ժամանակի համար համեմատական հաշվով, յելնելով տարեկան դրույքից:

§ 14. Պարզեցրված կարգով (առանց ստուգման) ապահովագրություն կնքելու ժամանակ վորևէ կասկած առաջ գալու դեպքում (ապահովագրվողի տված պատասխանների գույքի արժեքի ճշտության վերաբերյալ) պետք է կամ պահանջել ապահովագրվողից ներկայացնել նրա անձը վկայող փաստաթուղթ, տնային վարչության տեղեկանքը, իսկ գյուղական վայրերում ապահովագրելու դեպքում տվյալ անձի ունեցած գույքի արժեքի մասին վկայագիր գյուղխորհուրդներից, կամ ապահովագրությունը հետաձգել մինչև գույքը տեղում ստուգելը:

§ 15. Այն դեպքերում, յերբ ապահովագրված գույքը փոխադրվում է հրդեհային տեսակետից ավելի վտանգավոր շենք (իր կառուցվածքով, որինակ՝ քարե տնից փայտի տուն), ապա ապահովագրական վճարումները պետք է գանձել չլրացած ժամանակի համար գույքի նոր տեղի և նախկին տեղի շենքերի համար սահմանված դրույքների միջև յեղած տարբերության չափով: Հասանելիք լրացուցիչ ապահովագրական վճարումները վորոշվում են մինչ ապահովագրության ժամկետը մնացած որերի հաշվով: Յեթե ապահովագրվողը հրաժարվում է մուծել լրացուցիչ ապահովագրական վճարումները, ապա ապահովագրությունը դադարեցվում է և ապահովագրվողին վերադարձվում են ապահովագրական վճարումները մինչև ապահովագրության ժամկետը լրանալը:

§ 16. Ապահովագրական անդորրագիրը կորցնելու

43.779

դեպքում, ապահովագրվողը պարտավ[illegible] գրավոր հայտնել Պետապի այն մարմնին, վորն ընդունել ե ապահովագրությունը, կորած անդորրագրի փոխարեն ապահովագրվողին կարելի յե տալ անդորրագրի կրկնակը:

§ 17. Անդորրագրի կրկնակը տալիս ե Պետապի օրգանները ստուգում են անդորրագրի արմատի հիման վրա կամ այլ միջոցով: Պետք ե ստուգեն, թե արդյոք վորևե պատճառով դադարեցված չի յեղել տվյալ ապահովագրությունը և մուծված են արդյոք ապահովագրական վճարումները:

Անդորրագրի կրկնակի վրա պետք ե նշվի՝ «Այս անդորրագիրը տրված ե կորցրած № անդորրագրի փոխարեն»:

§ 18. Ապահովագրական գույքի հրդեհման կամ այլ տարերային աղետի յենթարկվելու վերաբերյալ ակտը շրջանային ապահովագրական տեսուչը կամ ապահովագրական վերադաս օրգանը (նայած վնասի չափին) կազմում ե ապահովագրվողի, տնային վարչության և յերկու վկաների ներկայությամբ:

§ 19. § 18-ում հիշատակված ակտ կազմելու և ապահովագրական վնասների գնահատմանը Պետապը պետք ե ձեռնարկի հրդեհի մասին իրեն հայտնելուց անմիջապես հետո, և համենայն դեպս վոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում քաղաքներում և 7 օրվա ընթացքում մնացած վայրերում:

§ 20. Կամավոր ապահովագրության կանոնների § 26-ի կարգով ստացված յուրաքանչյուր բողոք պետք ե քննության առնվի և լուծվի վոչ ուշ, քան բողոք ստանալու պահից 10 օրվա ընթացքում:

ԽՍՀՄ Պետապի գլխ. վարչության պետ՝ ԱՐԱԼՈՎ
8/V 34 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0215949

Պետհրատի Տպարան, Յերևան
Գլավլիտ 637 Պատվեր 4 Տիրաժ 3000